լանները, վանքերն ու ամրոցները։ Այս ա-
ռուակների հակառակ կողմից՝ աջից խառն-
ւում են Ճորոխին Կուդրաշէն, Կարմրիք, Քարամէնիք, Նիխախ-աջ, Զարկոնց, Օշնակ, Ղազերնիս *կամ* Կազերնիս[1], Կեանգնիս, Լէմս, Կիսկիմ, Կիսկիմ-բերդ[2], Կոչէր-ամ-բոց[3], Հարշիշ[4] (*Էրսիս*), Փէշկով, Ջիլի,

---

1 Բեջիգին լեռների վրայ Նրանց լանջին է Կազեր-նիսը, որը Կաղ կամ Կայծ բառն է յիշեցնում։ Ընդհան. բապէս ժողովուրդը Կազերենց է անուանում։

2 Կիսկիմ, Կիցկիմ, Կիցկա, Կեսիշիմ անուններով շատ վաղ ժամանակներից յայտնի է այս բերդը։ Ըստ Սան-դալճեանի նոյն իսկ Ասորա-Ուրարտական ընդհարումների արձանագրութեան մէջ անցած է այս անունը։ Կիսկիմը եղել է Մամիկոնեանների բերդը եւ երկար ժամանակ իշ-խել է գաւառին։ Թորդումի մէջ կայ նոյնպէս քսխաձոր առուակ եւ գեղ, այնպէս է որ այս անունը շատ գործա-ծուած է եւ նշանակութիւնը պարզուած չէ։

3 Իրիս-բերդից մի կիլոմետր հիւսիս Ճորոխի ձախ ափին կանգնած են Կոչէրի աւերակները, բերդի պարիսպ-ները եւ կործանուած դղեակները։ Կոչէրի ամրոցը ցոյց է տալիս, որ միեւնոյն նախարարը իրար մօտ չինել էր տալիս ամրոց-բերդ, գանձարան, կանանոց, մանկանոց, որոնք իրար հետ յաճախ ներքին կապով էին միացած։ Նոյն իսկ 4—5 կիլոմետր աւելի բարձրութեան՝ Ազմուշէն լեռների ստորոտում ունի երրորդ եւ աւելի բարձր ամրոց-բերդը։ որն հակում է Կոչէրի եւ Իրիսի բերդերին։

4 Հարշիշ, կառավարական անունը Էրսիզ է. բայց ժողովուրդը կանչում է Հարշիշ, Կարմրիկցի եւ Հնուացի Հայերը այդ գեղն անուանում են Ֆէրշիշ։ Երեւում է, որ Թն՝ Ֆի եւ ապա Հի է փոխուել սովորական կարգով Եթէ իսկապէս Թարշիշ է, ուրեմն այս գեղն էլ կապւում է Հաթթական Էփրատի ափի եւ Կիլիկեան ափի Թարշիշների կամ Թարսիսների հետ — Ցարոս, որով աւելի է հաստա-տում Ցայոց աշխարհի յարաբերական կապերը Հաթթերի եւ ստորին Միջագետքի Ակկադ-Շումերների հետ։